ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

**<<ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի**

**ք. Երևան** **_22_ _մայիսի_ _2019թ._**
**ժամը _10$^{00}$_**

*Մասնակցությամբ՝*

Հանձնաժողովի նախագահ՝ **Սուրեն Հովհաննիսյան**
Հանձնաժողովի անդամներ՝ **Կարինե Բարոյան**
**Սեմյոն Օրդույան**
**Արտեմ Ավետիսյան**
**Նարինե Նավասարդյան**
Հանձնաժողովի քարտուղար՝ **Պավել Գաբրեյան**

**1. <<ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին**

1.1 <<ԳՀԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով կոմիտեից ստացված տեղեկատվությունը (կցվում է), մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը (կցվում է) և հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները (կցվում է), հանձնաժողովը որոշեց.

- <<Ար.Մեդտեխնիկա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:
- <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ՝

- Հավաքածուի բաղադրիչների մի մասի համար ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ պահանջվող չափսերի և քաշերի հետ, ինչը գնահատվում է որպես ոչ էական, կլինիկական նշանակություն չունեցող տարբերություն:

- Առաջարկով տրամադրվել են հավաքածուի բաղկացուցիչների մեծ մասի ապրանքային նշանները, արտադրողների անվանումներն ու ծագման երկրները, բացառությամբ հավաքածուի վերջին 2 բաղկացուցիչների՝ հավելումներով արգանդի մոդելի և կրկնակի կլիպ ապլիկատորի: Խնդրում ենք տրամադրել այս երկու բաղադրիչի ապրանքային նշաններն ու արտադրողների մասին ինֆորմացիան՝ ներկայացված առաջարկի համապատասխանությունը ստուգելու նպատակով:

- Հավաքածուի բաղադրիչներից մեկի՝ մկաններով ձեռքի մոդելի համար պահանջվող տեխնիկական բնութագրերով ամրագրված է, որ բացի մկաններից պիտի ցուցադրված լինեն նաև ուսային, արմնկային և դաստակային հոդերի ոսկորներն ու ջլերը: Մասնակցի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագրում ամրագրված է, որ այս պահանջը բավարարվում է, սակայն Մասնակցի կողմից այս բաղկացուցիչի արտադրողի պաշտոնական կայքում զետեղված ինֆորմացիայի համաձայն, դաստակային հոդերի ոսկորները ցուցադրված չեն:

- Հավաքածուի բաղադրիչներից մեկի՝ մարդու կառուցվածքի մոդել մկաններով, պահանջվող տեխնիկական բնութագրերով ամրագրված է, որ մոդելի բոլոր անատոմիական կառուցվածքները իդենտիկ պիտի լինեն մարդկայինին չափսով, ձևով և տեղակայմամբ: Մասնակցի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագրում ամրագրված է, որ այս պահանջը բավարարվում է, սակայն Մասնակցի կողմից այս բաղկացուցիչի համար նշված արտադրողի պաշտոնական կայքում զետեղված ինֆորմացիայի համաձայն, առաջարկվող ապրանքային նշանով մոդելը իրական չափսի 3/4 չափսի է:

- Հավաքածուի բաղադրիչներից մեկի՝ ներերակային, ներմկանային և ներմաշկային ներարկումների մշակման համար նախատեսված ձեռքի ֆանտոմի պահանջվող տեխնիկական բնութագրերով ամրագրված է, որ պունկցիայի համար պիտի հասանելի լինեն մի քանի երակներ, այդ թվում նաև՝ ձեռքի միջանկյալ ենթամաշկային երակը, ձեռքի լատերալ ենթամաշկային երակը և ձեռքի լատերալ հավելյալ ենթամաշկային

երակը: Մասնակցի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագրում ամրագրված է, որ այս պահանջը բավարարվում է, սակայն Մասնակցի կողմից այս բաղկացուցիչի համար նշված արտադրողի պաշտոնական կայքում զետեղված ինֆորմացիայի համաձայն (տեսանյութեր և տարբեր կատալոգային/բրոշյուրային նյութեր), նշված երակները հասանելի չեն պունկցիայի համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

**2. <<ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

2.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

- Մեկ աշխատանքային օրով կասեցնել սույն նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված իրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

**3. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները**

**Հանձնաժողովի նախագահ՝** _______________ *(ստորագրությունը)* **Ս. Հովհաննիսյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** _______________ *(ստորագրությունը)* **Կ. Բարոյան**

_______________ *(ստորագրությունը)* **Ս. Օրդոյան**

_______________ *(ստորագրությունը)* **Ա. Ավետիսյան**

_______________ *(ստորագրությունը)* **Ն. Նավասարդյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** _______________ *(ստորագրությունը)* **Պ. Գաբրեյան**